ւորութեան, նզինքն Յովհաննու ուրացա-
զՔրիստոս՝ որպէս զՅուլիանոս։ Սա հնա-
զանդեցոյց զաշխարհն Պուլղարաց խռով
հրմտութեամբն և կարողութեամբն։ Էր
նա յոյժ խոհեմ և հանճարեղ, այր պար-
զախօս և պարզալեզու։ Սա մինչ էր 'ի
պատերազմին և տիրէր քաղաքացն Սլա-
մանաց, եկն 'ի քաղաք մի Յորխոոս ա-
նուն, և յանկարծակի արեան բղխեալ
ընդ բերանն և ընդ քիթն, և այնպէս չա-
րաչար մեռաւ։

Վաղէնտիանոս՝ որ թարգմանի՝ քաջ
կամ ուժեղ այր, ընդ եղբօր իւրում Վա-
ղէսի սկսան յամի Տեառն ՅԿԴ։ Ինք-
նակալեալ ամս չորս՝ ընդ Վաղէսի, Վա-
ղէնտիանոս ուղղափառ 'ի Հռոմ, և Վա-
ղէս չարափառ 'ի Կոստանդնուպօլիս։ Սա
Վաղէս աքսորեաց զՀայրապետն մեր
զՏէր Ներսէս՝ վասն սաստկման որդւոյն
իւրոյ։ Սա Վաղէս գնաց 'ի վերայ Գօթա-
ցւոց՝ որ են Տուտէշք՝ 'ի պատերազմ, և
պարտեալ փախեաւ 'ի նոցանէ. և Գօթա-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան